

Արուեստի տեսակետով, կը գտնենք Վարուժանի մէջ ասանձարձակ երեւակայութիւն մը, վերացման ու վերլուծման հաւասարապէս ուժգին կարողութիւն որ մերթ կ'աղօտացնէ ու կը յամեցնէ զգացումները, արտայայտութեան հօգոր կամք մը որ եղէգի պէս գիտէ ճկիլ, եւ լեզու մը ներդաշնակ, կուռ, հանդիսաւոր, առանց կրկնաբան ու երկարաբան ըլլալու: Մերթ նմանութիւններ, փոխաբերական ասացումաձքներ ու մանրամասնութիւններ ընելու հոգը ուռուցիկ կը դարձնէ իր մէկ քանի քերթուածները, ինչպէս *Բեգաս* խորագրով իր մէկ քերթուածը: Չեն պակսիր շա'տ աղքատ յանգեր կամ նոյն իսկ յանգի բացակայութիւններ ճոխ յանգերու քով, ինչ որ արուեստի անհաւասարութիւն մըն է: Չեն պակսիր թարմատար յերիւրուած կամ սխալ վանկերի, բռնի չափեր (*césure*) լեցնելու համար, ինչպէս թա-րԸմ, անօ-սԸր, գող-տԸրիկ, ընտԸրուած, փոխանակ ըսելու ընտրուած: Սխալ բառեր ալ չեն պակսիր. ինչպէս *առջի*, առաջին ըսելու տեղ,– քանի որ առջի կը նշանակէ նախընթաց, անցեալ: Նշանակելի է նաեւ «կը» երու անհարկի կրճատումը՝ բաղաձայններու առջեւ. բառերու կրճատումը, ինչպէս գերեզմնոց, յուսհատութիւն, ևն.: Բայց լեզուին ընդհանուր կուռ ներդաշնակութեանց մէջ անշուշտ այս խորթութիւնները հետզհետէ պիտի անհետանան:

Ներթանոս երգերուն վերլուծման մէջ ջանացի ընտրել գլուխ-գործոցներ, եւ հարկ եղաւ տեսակէտներու բաժնել զանոնք, գրքին երեք բաժանումներուն համաձայն. *Արեւելեան բաղանիքը* գլուխ-գործոց մըն է իբրեւ զուտ զգայաբանական յաջող գունագեղ տպաւորութիւն, իբրեւ պատկեր միայն, բայց ոչ իբրեւ մարդկային վերին զգացման ազուցում մը: Գլուխ-գործոց մըն է *Հարճը* իբրեւ դիւցագնավէպ կամ իբրեւ պատմուածք, թէւ կարելի է կրճատել տեղ տեղ. գլուխ-գործոց մըն է *Լոյսը* իբրեւ զգացում, շքեղ վերացման մը հասած: Իսկ այլապէս գեղեցիկ են եւ հօգոր իր այն քերթուածները որ կը կոչուին՝ *Ո՛վ Լալագե, Ականջներուն, Ճանապարհ խաչի, Սպասում, Խարբուած կոյսեր, Մերենաները, Գաղար, Լքում*, եւ այլն: